Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

351.75
Հ-99

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

ՀՐԱՀԱՆԳ

ԹԱՂԱՅԻՆ ՀՍԿԻՉԻՆ

Հ.Դ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս.Ս.Հ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
7/II 1922
ԵՐԵՎԱՆ, ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՅԴԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ Ն. Գ. Ժ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ
ՋԵՐԵՎԱՆ 1926

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՔՈՒՐԹԱՓՈՂԿԱՄԲԵՏԻ
ՋԵՐԵՎԱՆ 1926

351.75
Z-99

1 MAR 2010

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

ՀՐԱՀԱՆԳ ԹԱՂԱՅԻՆ ՀԱԿԱՌԻՆ

1003
139 06

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Ն. Գ. Ժ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ 1926

14 JUN 2013

39475

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Դրառ. 398 բ. Պատվեր 2742 Տիրաժ 300

«ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Է»

Ներքգործ ժողկոմ՝ Հ. ԴՈՒՐԳԱՐՅԱՆ
Հանրմիլպետ՝ Ա. ԲԵՐԲԵՐՅԱՆ

«1» Մարտի 1926 թ.

ԳԼՈՒԽ I.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Թաղային հսկիչը Միլիցիայի պաշտոնյա է, վորի հսկողությանը և պահպանմանն է հանձնված քաղաքի կամ քաղաքատիպ բնակավայրի վորոշ թաղը։

Թաղային հսկիչն իրեն հանձնված թաղի սահմաններում պարտավոր է՝

ա) հսկել, վոր մասնավոր մարդիկ և պաշտոնատար անձինք կատարեն Խորհրդային Իշխանության հրատարակած հեղափոխական կարգի պահպանման, հասարակական և անձնական ապահովության ու բարեկարգության վերաբերող որենքները, պարտադիր վորոշումները և կարգադրությունները,

բ) հայտնաբերել, կասեցնել և վերջ տալ քրեական հանցագործությունները և հեղափոխական կարգի, ապահովության և բարեկարգության խախտումները, Միլիցիայի ծառայության կանոնադրության և Միլիցիայի

որգանների կողմից կատարվող հետաքննության կանոնների սահմաններում,

գ) համաձայն գոյություն ունեցող որենքների և պարտադիր վորոշումների, ոժանդակել պետական հիմնարկություններին յեվ պաշտոնատար անձանց կատարելու իրենց վրա դրված պարտականությունները,

դ) ոժանդակություն յեվ ոգնություն ցույց տալ քաղաքացիներին այն սահմաններում, վորպիսիք մտնում են նրա պարտականությունների մեջ, վորպես Միլիցիայի պաշտոնատար անձի։

3. Թաղային հսկիչը սուլն հրահանգի հոդված 2-ով իր վրա դրված պարտականությունների կատարման ժամանակ անշեղ կերպով առաջնորդվում է.—կենտրոնական յեվ տեղական իշխանության իր պարտականությունները վորոշող որենքներով և կարգադրություններով, Միլիցիայի ծառայության կանոնադրությամբ, պահակային միլիցիոների հրահանգով, Միլիցիայի որգանների հետաքննություն կատարելու կանոններով յեվ սուլն հրահանգով։

4. Թաղային հսկիչն անմիջականորեն յենթարկվում է քաղաքամասի Միլպետին յեվ նրա ոգնականին ու կատարում է նրանց բոլոր որինական կարգադրությունները յեվ հրամանները։ Յեթե քաղաքի կամ քաղաքատիպ բնակավայրի միլիցիան մասերի չի վերածված, ապա թաղային հսկիչն անմիջականորեն յենթարկվում է այդ քաղաքի կամ քաղաքատիպ բնակավայրի Միլիցիայի պետին։

5. Թաղային հսկիչն իր պարտականությունների կատարման ժամանակ պիտի հագնված լինի սահմանված սարազով, միանգամայն կանոնավոր վիճակում կրի իրեն հատկացրած զենքը։ Նույնպես յեվ ունենա սուլիչ ու ծոցատետրը, թաղին վերաբերյալ բոլոր տեղեկություններով։

6. Թաղային հսկիչը լավ ծանոթ պիտի լինի

ա) քաղաքի հատակագծին,

բ) այն քաղաքամասի սահմանների մեջ մտնող փողոցներին, նրբանցքներին, հրապարակներին, ուր ծառայում է ինքը,

գ) իր հսկողությանն հանձնված թաղին հարակից թաղամասերին յեվ այդ թաղամասերում յեղած միլիցիական պահակատեղերին,

դ) մոտակա զինվորական մասերի, Արտակարգ Հանձնաժողովի բաժինների յեվ Քրեական հետախուզության հիմնարկների տեղերին։

յե) մոտակա հրդեհաշեջ կետերին,

զ) մոտակա դեղատների, հիվանդանոցների, ապաստարանների, ծննդաբերական տների

տեղերին յեվ մոտակայքում ապրող բժիշկների ու մանկաբարձուհիների բնակատեղերին։

ե) քաղաքամասի սահմաններում գտնվող հանրային վայրերին՝ թատրոններին, ճաշարաններին, գինետներին, թեյարաններին, կինոներին յեվ այլն,

զ) քաղաքամասի սահմաններում գտնվող պետական յեվ հասարակական հիմնարկություններին, արհմիություններին, կուսկոմիտեներին, կրոնական հաստատություններին յեվ այլ հասարակական կազմակերպություններին, նույնպես յեվ պետք է ճանաչի դատախազին յեվ նրա ոգնականներին, քննիչներին, ժողդատավորներին, ինչպես յեվ աշխատանքի, բնակարանային, ֆինանսական յեվ սանիտարական տեսուչներին։

7. Իր հսկողությանն հանձնված թաղամասում թաղային հսկիչը քաղ ծանոթ պիտի լինի՝

ա) թաղամասի բնակչության և թաղամասում յեղած տների թվին,

բ) բնակելի և անբնակելի շենքերի գավիթների և հետագավիթների դասավորությանն ու նրանց առանձնահատկություններին,

գ) շուկաներին, նույնպես և առևտրական, արդյունաբերական և գործարանային ձեռնարկություններին և ձեռքի վրա առևտուր անելու թույլատրած վայրերին,

դ) առանձին տների բնակչության կազմին և նրանց զբաղման տեսակներին,

յե) տնային վարչությունների կազմին, ինչպես և դռնապաններին ու պահապաններին,

զ) միլիցիական պահակատեղերի վայրերին և դռնապանների ու պահապանների հերթապահության կետերին։

8. Թաղային հսկիչն իրեն հանձնված թաղի ընդհանուր հսկողության և իր վրա դրված պարտականությունների հաջող կատարման համար պետք է թե գիշեր ու թե ցերեկ ժամանակ, ըստ հնարավորի հաճախ, շրջագայի թաղամասում, գիշերային շրջագայության ժամանակ պահակային միլիցիոներների պահակային գրքույկում նշանակելով շրջագայության ժամը և ստորագրելով։

9. Շրջագայության ժամանակ պահակային միլիցիոներների, դռնապանների և պահապանների իրենց պաշտոնի կատարման մեջ անճշտություններ և անկանոնություններ հայտնաբերելու դեպքում, թաղային հսկիչը նրանց համապատասխան ցուցմունքներ է անում, առաջնորդվելով այդ մասին գործադրվող հրահանգներով և կանոններով։

10. Թաղային հսկիչները, գործելով ամեն մեկն իր թաղի սահմաններում, պետք է միմիանց հետ մշտական հաղորդակցության մեջ լինեն և փոխադարձ ոժանդակություն ցույց տան միմիանց, իրենց պաշտոնական պարտականությունների կատարման ժամանակ։

11. Թաղային հսկիչը գործում է իր թաղի վորոշակի սահմաններում, բայց ականատես լինելով կատարված հանցագործության, պարտավոր է իր վրա դրված պարտականությունները կատարել նաև իր թաղից դուրս։ Բացի դրանից, հանցագործին հետապնդելիս և հետախուզությունը շարունակելու անհրաժեշտության դեպքում, թաղային հսկիչը չի դադարեցնում իր պաշտոնատարական գործողությունները մինչև հանցագործին ձերբակալելը կամ հետախուզությունն ավարտելը և կամ մինչև իրեն կփոխարինե Միլիցիայի կամ Բրեյական հետախուզության տեղական կամ այլ աշխատակիցը։ Նմանապես և թաղային հսկիչը, յեթե ղեկավարում է տարերային փորձանքների առաջն առնելու համար ձեռնարկված միջոցները, շարունակում է իր գործունեությունը նաև իր թաղի սահմաններից դուրս, մինչև տեղական Միլիցիայի ներկայացուցչի գալը։

12. Թաղային հսկիչները հերթով, քաղաքամասի պետի սահմանած կարգով, քաղաքամասում կրում են հերթապահություն։

Բացի քաղաքամասում պահակ կանգնելուց, թաղային հսկիչներին կարող են ժամանակավորապես հանձնվել պահակային ծառայություն մեծ շարժում ունեցող փողոցներում, հրապարակներում։

Պահակային պարտականություններ կատարելու դեպքում թաղային հսկիչն առաջնորդվում է սույն հրահանգով և պահակային միլիցիոնների հրահանգով, իսկ քաղմասում հերթապահություն անելիս՝ միլիցիայի ներքին ծառայության կանոնադրությամբ և սույն հրահանգով։

13. Պահակություն և հերթապահություն կատարելիս կամ շրջագայելիս, թաղային հսկիչը զեկուցում է քաղմասի պետին՝

ա) աչքի ընկնող դեպքերի մասին անմիջապես (հրդեհի, նույնպես և ցույցերի, միտինգի դեպքում, յեթե վերջիններիս համար հատուկ թույլտվություն չկա),

բ) պահակային միլիցիոնների, դոնապանների և պահապանների կողմից իրենց պարտականությունների կատարման ժամանակ թույլ տված անճշտությունների և անկանոնությունների (յեթե այդպիսիք եյական են և կրկնվում են) և իր արած ցուցմունքների մասին,

գ) իշխանավոր անձանց կողմից իրեն արած նկատողություններ և ցուցմունքների մասին։

14. Իր պաշտոնական պարտականությունների կատարման ժամանակ թաղային հսկիչը պետք է խստորեն պահպանի որենքով սահմանված կարգը, քաղաքացիներին անհանգստացնող գործողություններ թույլ տալով միայն այն դեպքերում, յերբ այդպիսիք անպայմանորեն անհրաժեշտ են իր պարտականությունների կատարման համար։

15. Թաղային հսկիչը կարող է մասնավոր բնակարաններ մտնել միայն ստորև հիշված դեպքերում.—

ա) հանցագործին հետապնդելիս, թարմ հետքերով, յեթե նա թաղնվել է վորևե մեկի բնակարանում,

բ) յեթե վորևե մեկի բնակարանում հանցագործություն է կատարվել կամ կատարվում,

գ) բնակարանում հանրային խաղաղությունը խախտելու դեպքում,

դ) պաշտոնական թղթերի կատարման և քաղաքացիներին զանազան պահկություններ կրելու հրավիրելու դեպքում,

յե) բնակարանների տերերի խնդրանքով,

իրենց որինական ոժանդակություն ցույց տալու համար,

զ) յերբ անհրաժեշտ է խուզարկություն կատարել։

16. Քաղաքացիներին դիմելիս, թաղային հսկիչը պետք է քաղաքավարի լինի, նրանց դիմի «դուք»—ով և իր պաշտոնական պահանջները ներկայացնի հանգիստ, բայց հաստատակամ և վճռական։ Թաղային հսկիչը, յերբ քաղաքացիք նրա պաշտպանությանն են դիմում, պարտավոր է գնալ դեպքի վայրը, նրանց պաշտպանելու գործադրվող հանցագործություններից։

17. Յերբ թաղային հսկիչը անկարող է լինում իր պարտականությունները կատարել սեփական ուժերով կամ պահակային միլիցոնների, դռնապանների և պահապանների ոգնությամբ, իրավունք ունի քաղաքացիներից ոժանդակություն պահանջել.—

ա) դադարեցնելու իր հայտնաբերած հանցագործությունը կամ կարգի խախտումը,

բ) ձերբակալման յենթակա անձանց հետապնդելու, յեթե այդպիսիք թաղնվում են իրենից,

գ) ձերբակալված անձանց քաղաքամաս ուղեկցելու,

դ) ինչպես իրեն, նույնպես և այլ պաշ-

տոնատար անձանց ոժանդակություն ցույց տալու, յեթե իր պարտականությունների կատարման ժամանակ դիմադրության ե հանդիպում,

յե) հանցագործություններից, տարերային փորձանքներից կամ դժբախտ դեպքերից վնասվածներին, հիվանդ մանուկներին և հատուկ խնամքի կարոտ անձանց ոգնություն ցույց տալու և մինչև ժամանշված վայրն ուղեկցելու,

զ) շտապ հաղորդագրություններ առաքելու,

ե) խուզարկելի վայրը շրջապատելու և պահանելու։

18. Քաղաքացիներից ոգնություն և աջակցություն ստանալու (հոդ. 17) անհրաժեշտության դեպքում, թաղային հսկիչն առաջին հերթին դիմում ե պատահարի վայրում գտնվող կամ մոտից անցնող զինվորականներին և իրեն անձնապես ծանոթ ու վստահելի անձանց։

19. Բացի հոդ. 17-ում հիշատակված դեպքերից, թաղային հսկիչն իրավասու յե քաղաքացիներից աջակցություն խնդրել վորպես ընթերականեր խուզարկությունների, հանությունների, զննումների և դանազան արձանագրություններ կազմելու դեպքում։

20. Թաղային հսկիչն իրավասու յե աջակ-

ցություն պահանջել կառապաններից և վարձու ավտոմոբիլների շոֆֆերներից՝

ա) ժամանշված հասցեով փոխադրելու հանկարծամահներին, ծանր հիվանդներին, ծննդկաններին և հանցագործություններից կամ դժբախտ պատահարներից վնասված անձանց,

բ) քաղաքամաս փոխադրելու խիստ հարբած վիճակում գտնվող անձանց,

գ) ձերբակալման յենթակա անձանց հետապնդելու։

21. Թաղային հսկիչը, իր պարտականությունների կատարման ժամանակ, իրավասու յե զենք գործածել՝

ա) իր վրա յեղած զինված հարձակման կամ իր որինական պահանջներին զինված դիմադրություն ցույց տալու դեպքում,

բ) պաշտպանվելու իր վրա կատարած հարձակումից, թեկուզ և վոչ զինված, բայց վորն սպառնում ե նրա կյանքին, առողջությանը, ազատությանը կամ նպատակ ունի փախցնել իր ուղեկցած ձերբակալվածին կամ խլել ծառայության բերմամբ իր մոտ գտնված գույքը, դրամը, թղթերը կամ զենքը՝ յեթե պաշտպանման այլ միջոց հնարավոր չե։

դ) ուրիշներին պաշտպանելու հարձակու-

մից, որը սպառնում է նրանց կյանքին, առողջությանը, անձի անձեռնմխելիությանը, եթե պաշտպանության այլ միջոցների դիմելու հնարավորություն չկա,

գ) արգելելու ուրիշի գույքին բռնի կերպով տիրանալը, եթե այդ բռնությունն այլ միջոցներով արգելել հնարավոր չէ,

յե) հանցագործին և կալանքից փախած կալանավորներին ձերբակալելու, եթե նրանց ձերբակալումն հնարավոր չէ առանց զենքի գործադրության։

22. Հրահանգի հոդված 21-ի «յե» կետում ցույց տված դեպքում, թաղային հսկիչը, զենքը գործածելուց առաջ, այդ մասին նախազգուշացնում է կանչելով, ըստ որում ձեռք է առնում իրենից կախված բոլոր միջոցները, որպեսզի զենքի գործածության ժամանակ կողմնակի անձինք չտուժեն։

23. Զենք գործադրելու բոլոր դեպքերի մասին թաղային հսկիչը զեկուցում է քաղաքամասի պետին, մատնանշելով գործադրած փամփուշտի թիվը։

Եթե զենքի գործադրության հետևանքը եղել են սպանվածներ կամ վիրավորներ, թաղային հսկիչն այդ մասին անմիջապես արձանագրություն է կազմում՝ մանրամասն նկարագրելով դեպքի հանգամանքները, ցույց տալով սպանվածների յեվ վիրավորների թիվը, մատնանշելով նրանց ինքնությունը։ Հիշյալ արձանագրությունն անհապաղ ներկայացնում է քաղաքամասի պետին։

ԳԼՈՒԽ II.

ԹԱՂԱՅԻՆ ՀՍԿՉԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԱՐԳԻ, ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

24. Թաղային հսկիչը, քրեական հանցագործությունների և հեղափոխական կարգի, ապահովության և բարեկարգության խախտման առաջն առնելու և կանխելու նպատակով՝

ա) ըստ հնարավորի հաճախակի շրջագայում է տները և ստուգում բնակվողների ինքնությունը, ըստ տնային գրքերի, հայտնաբերելով չարձանագրված և համապատասխան փաստաթղթեր չունեցող անձանց,

բ) տեղեկություններ է ժողովում, իր թաղամասի սահմաններում, բոլոր կասկածելի վայրերի և անձանց մասին, նրանց վրա հսկողություն է սահմանում և նկատած յերևույթների մասին զեկուցում քաղաքամասի պետին,

գ) Թույլ չի տալիս հանցագործությամբ ձեռք բերած կայքի վաճառք և փոխանակություն շուկաներում, աճուրդներում, գինետներում, թեյարաններում ու նման այլ հաստատություններում և միջոցներ է ձեռք առնում հայտնաբերելու այդպիսի կայքի վաճառքով զբաղվողներին, որոնք այդ գործն իրենց արհեստն են դարձրել,

դ) Ներկա չէ լինում փողոցներում և հրապարակներում տեղի ունեցող ժողովրդական մասսայական ամեն տեսակ համախմբումներին։

25. Թաղային հսկիչը, դատական վորոշումներն ի կատար ածելու կարգով, հսում է, վոր Թաղի սահմաններում չբնակվեն այնպիսի անձինք, վորոնց, դատական վորոշումով, տվյալ վարերում բնակվելն արգելված է։

26. Հանցագործությունները և խախտումները կանխելու և վերացնելու նպատակով, Թաղային հսկիչն իրավասու է քաղաքացիներին օրինական կարգը պահպանելու վորոշակի պահանջներ ներկայացնել, նրանց անիրազեկության դեպքում, բացատրելով օրենքի պահանջները։

27. Թաղային հսկչին բացառիկ դեպքերում միայն Թույլ է տրվում քաղաքացիներին քաղաքավոր կանչել, օրինական կարգը պահպանելու պահանջ ներկայացնելու համար։

10003
13906

28. Հանցագործությունները և խախտումները հայտնաբերելու և մեղավորներին դատական կամ վարչական կարգով պատասխանատվության յենթարկելու նպատակով, Թաղային հսկիչը պարտավոր է՝

ա) ընդունել քաղաքացիների և պետական ու հասարակական հիմնարկությունների բերանացի և գրավոր հայտարարություններն իրենց նկատած հանցագործությունների ու խախտումների մասին, ինչպես և հանցագործությունից վնասված անձանց դիմումները,

բ) կազմել արձանագրություն իր հայտնաբերած հանցագործությունների, խախտումների, ինչպես և իր օրինական պահանջներն ու կարգադրությունները չկատարելու մասին,

գ) ճշտել կասկածելիների և խախտողների ինքնությունը,

դ) քաղաքացիական պետի կարգադրությամբ, իսկ հատուկ դեպքերում, ըստ կարիքվորության, նաև իր նախաձեռնությամբ, կատարված հանցագործությունների և խախտումների մասին [illegible] քննություն կատարել։

29. Հոդված [illegible] հիշատակ-

Հ.Ս.Հ.Հ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Գրադարան
Библиотека
7/31 1922
Ереван, Мясникяна

ված հանցագործությունների և խախտումների մասին կազմելիք արձանագրությունը թաղային հսկիչը կազմում է անմիջապես, հանցագործություն կամ խախտում հայտնաբերելիս, առաջնորդվելով արձանագրություն կազմելու կարգի հրահանգով (հավելված № 1)։

30. Թաղային հսկիչն իր կազմած արձանագրությունը կարդում է բոլոր հարցաքննվողներին, վորոնք իրավունք ունեն պահանջել արձանագրության մեջ մացնել իրենց բացատրություններն ու հայտարարությունները։

Յեթե կասկածվողը կամ հարցաքննության յենթարկվողներից վորևե մեկը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, թաղային հսկիչն այդ հանգամանքը մտցնում է արձանագրության մեջ, ցույց տալով հրաժարվելու պատճառները։ Յեթե արձանագրությունը կազմվում է կասկածվողի կամ խախտողի բացակայությամբ, թաղային հսկիչն այդ մասին հիշատակում է արձանագրության մեջ։

Կազմած արձանագրությունը թաղային հսկիչն առանց հապաղման ներկայացնում է քաղաքամասի պետին։

31 Կասկածի յենթարկվածի կամ խախտողի ինքնությունը ճշտելու համար, թաղային հսկիչը պարտավոր է պահանջել նրանից ներ-

կայացնելու համապատասխան փաստաթուղթ։

Նման փաստաթուղթ կարող է ծառայել՝

ա) Ներքին Գործոց ժողովրդական կոմիսարիատի սահմանած ձևի անձնագիրը,

բ) կասկածվողների կամ խախտողի մոտ յեղած վորևե փաստաթուղթ, տրված պետական հաստատություններից կամ արհեստակցական միություններից, համապատասխան ստորագրություններով և կնիքով, վորի մեջ ճիշտ հիշատակված է նրա ազգանունը, աշխատավայրը, ծառայության վայրը կամ բնակավայրը։

31. Յեթե կասկածվողը կամ խախտողը չունենա հոդ. 30-ում ցույց տված փաստաթուղթը կամ ներկայացրած փաստաթուղթն անճիշտ լինի, կամ ժամանակն անցած և կամ կասկած հարուցող, ապա թաղային հսկիչը նրան հրավիրում է գնալ քաղաքամաս ճշտելու ինքնությունը. հրաժարվելու դեպքում, այդպիսիներին տանում է հարկադրաբար։

33. Թաղային հսկիչը իրավասու յե ձերբակալել հանցագործության կամ խախտման մեջ կասկածվող՝ դատական կարգով հետապնդվող անձնավորության՝

ա) յեթե այդպիսին բռնվել է հանցանքը նախապատրաստելիս, հանցանքը գործելիս

կամ հանցագործությունից անմիջապես հետո,

բ) եթե ականատեսները կամ տուժողը մատնացույց կանեն տվյալ անձին, որպես հանցանք կամ խախտում կատարողի,

գ) եթե կասկածելի անձի մոտ կամ նրա բնակարանում կգտնվեն հանցագործության կամ խախտման հետքեր,

դ) եթե կասկածելի անձը փորձում է փախուստի դիմել կամ բռնվում է փախչելիս,

ե) եթե կասկածելի անձը չունի մշտական բնակավայր,

զ) եթե չի ճշտվում կասկածելի անձի ինքնությունը։

34. Թաղային հսկիչն իրավասու է ձերբակալել այն քաղաքացիներին, որոնք կկասկածվեն որպես Խորհրդային Իշխանության պարտադիր որոշումները և այլ կարգադրությունները խախտելու մեջ, եթե հիշյալ որոշումների և կարգադրությունների ու այս հրահանգի մեջ նման ձերբակալությունների կարելիությունն նախատեսվում է։

35. Մնացյալ բոլոր դեպքերում թաղային հսկիչը հանցագործություններ կատարելու կամ պարտադիր որոշումները և այլ կարգադրությունները խախտելու մեջ կասկածվող անձանց

ձերբակալում է միայն համաձայն հատուկ որդերների, տրված Դատախազական հսկողության որգանների, գավառի, շրջանի և քաղաքամասերի Միլիցիայի պետի և այլ, որենքով այդ մասին լիազորված անձանց կողմից։

36. Հոդված 32—35-ի կանոնը չի տարածվում թաղային հսկչի կողմից ձերբակալած այն անձանց վրա, որոնք հանրային վայրերում յերևում են ակնհայտանի հարբած վիճակում և այն դեպքերում, որոնք նախատեսված են սույն հրահանգի համապատասխան հոդվածներով։

37. Ամեն անգամ, անձնապես ձերբակալելու դեպքում, թաղային հսկիչը կազմում է վարոշում, որի մեջ մանրամասն ցույց է տալիս՝

ա) ո՞վ է ձերբակալել,

բ) տեղեկություններ ձերբակալվածի անձնավորության մասին՝ անուն, հայրանուն, ազգանուն, տարիք, ծագում, բնակավայր, կրթություն, հիմնական զբաղմունք, ընտանեկան դրություն, սոցիալական դրություն, տվյալ ժամանակի զբաղմունքը, զինվորական դրություն, կուսակցականություն, ինչ կապակցություն ունի տուժածի հետ, եթե կա այդպիսի կապ, դատված լինել—չլինելը,

գ) եյությունը այն հանցագործության կամ խախտման, որի մեջ կասկածվում է ձերբակալվածը,

դ) ձերբակալման հիմունքը,

յե) որոշումը կազմողի ստորագրությունը։

Որոշումը կազմելուց հետո, թաղային հսկիչը հայտնում է այն ձերբակալվածին և ապա անհապաղ ներկայացնում է քաղաքամասի պետին։

38. Ձերբակալման յենթարկվածին թաղային հսկիչն ուղարկում է քաղաքամաս, վերցնելով նրանից զենքերը և հանցագործության գործիքները, յեթե այդպիսիք կան և միջոցներ է ձեռք առնում, որպեսզի ձերբակալվածը ճանապարհին որևե իր դեն չձգի։ Յեթե կասկածվում է, որ ձերբակալվածը նշանավոր հանցագործ է, այդ դեպքում նրանից վերցնում է նրա մոտ յեղած թղթերը և իրերը։

39. Տեղեկություն ստանալով արդեն կատարված հանցագործության կամ խախտման մասին, թաղային հսկիչն անմիջապես գնում է պատահարի վայրը և անհրաժեշտ միջոցներ է ձեռք առնում պահպանելու հանցագործության հետքերը, նույնպես և հայտնաբերելու և ձերբակալելու հանցագործության կամ խախտման մեջ կասկածվողին։

40. Թաղային հսկիչը, թաղի սահմաններում նկատելով այնպիսի հետքեր, որոնք կարող են ապացույց լինել կատարված հանցագործության, միջոցներ է ձեռք առնում նրանց պահպանման, ինչպես և հայտնաբերելու հանցագործությունը և հանցագործին, այդ մասին հայտնելով քաղաքամասի Միլիցիայի պետին։

41. Թաղային հսկիչն առանց քննիչի, բժշկի կամ քաղամասի պետի թույլտվության, արգելում է թաղել հանկարծամահներին, ինքնասպաններին, ինչպես և գտնված դիակները և միջոցներ է ձեռք առնում՝ ա)—մինչև բժշկի կամ քննիչի գալը, պահպանելու նրանց ըստ հնարավորի այն դրությամբ, ինչ դրությամբ որ այդպիսիք հայտնաբերված են, և բ) պարզելու մեռածների ինքնությունը, մահվան պատճառները և հանգամանքները։

42. Հանցագործություններ և խախտումներ հայտնաբերելու դեպքում, թաղային հսկիչն անմիջապես զեկուցում է Միլբաժնի պետին և նրա կարգադրությամբ հետաքննություն է կատարում, համաձայն Միլիցիայի ծառայության և Միլիցիայի ժարմինների կատարած հետաքննությունների կանոնների։

43. Առանց Միլբաժնի պետի կարգադրության, թաղային հսկիչը հետաքննություն է կա-

տարում միայն անհետաձգելի դեպքերում, անհապաղ զեկուցելով քաղմասի պետին և բավականանալով միայն հետաքննության ամենաանհրաժեշտ միջոցներով։

ԳԼՈՒԽ III.

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՅԵԼՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

44. Թաղային հսկիչը թույլ չի տալիս հաժախմբումներ, յերթեր, ցույցեր հակահեղափոխական նպատակներով, ամեն տեսակ հակահեղափոխական կոչերի, թռուցիկների բաժանում, ցրում, պատերին փակցնել և ընդհանրապես հակահեղափոխական բնույթ կրող գրականության տարածում, նույնպես և արգելումե պոկել Խորհրդային գինանշանն ու դրոշակը և ի ցույց դնել իր բնույթով և բովանդակությամբ Խորհրդային Իշխանության թշնամի դրոշակներ ու պլակատներ։

45. Հոդված 44-ում մատնանշած հակահեղափոխական յելույթներ հայտնաբերելիս, թաղային հսկիչն այդ մասին անհապաղ հայտնում է քաղմասի պետին և Արտակարգ Հանձնաժողովի մոտակա օրգանին, միաժամանակ միջոցներ ձեռք առնելով ձերբակալելու հանցավորներին, պոկելու, հավաքելու փակցրած, ցրած

կոչերն ու թռուցիկները և ի ցույց դրված դրոշակներն ու պլակատները վերցնելու։

ԳԼՈՒԽ IV.

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՄՈՒԼԻՆ, ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՅԵՐԹԵՐԻՆ, ՑՈՒՅՑԵՐԻՆ, ԿՈՒԼՏՈՒՐ—ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻՆ, ԱԿՈՒՄԲՆԵՐԻՆ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

46. Թաղային հսկիչն հետևում է, վորպեսզի հասարակական վայրերում՝

ա) չցուցադրվեն և չտարածվեն թույլտվություն չունեցող տպագրական աշխատություններ, պատկերներ, լուսանկարներ և այլն։

բ) չփակցվեն և չտարածվեն համապատասխան օրգաններից թույլտվություն չունեցող հայտարարություններ, աֆիշներ, պլակատներ և չպոկեն կոմունալ տնտեսության բաժնի մատնանշած տեղերում կպցրած հայտարարությունները, աֆիշները, պլակատները,

գ) արգելքներ չը հարուցվեն իշխանության

թույլտվությամբ կազմակերպվող ժողովների կայացման։

47. Հոդված 46-ում մատնանշված խախտումները հայտնաբերելիս, թաղային հսկիչը վերացնում է այդպիսիք, գոնում հանցագործներին և կատարած քննության արդյունքները իրային ապացույցների հետ միասին, զեկուցում քաղաքամասի պետին։

48. Թաղային հսկիչը միջոցներ է ձեռք առնում միջմիութենական կազմակերպությունների մեջ ցուցակագրված բանվորների և ծառայողների արհեստակցական (արտադրական) միությունների անարգել կազմակերպման և ազատ գործունեության համար, համաձայն Համամիութենական Արհմիությունների համագումարի սահմանած կարգի։

49. Թաղային հսկիչն հետևում է, որ թաղի սահմաններում չբացվեն ընկերություններ, կուլտուր-լուսավորական հիմնարկներ և ակումբներ, ինչպես և չկայանան հասարակական ժողովներ, յերթեր, ցույցեր, հրապարակական հանդեսներ առանց համապատասխան թույլտվության, յեթե որենքով այդպիսի թույլտվություն պահանջվում է։

50. Հայտնաբերելով առանց համապատասխան թույլտվության բացված ընկերություն-

ներ, կուլտուր-լուսավորական հիմնարկներ, թաղային հսկիչը զեկուցում է քաղամասի պետին, իսկ առանց թույլտվության կայացած ժողովները, յերթերը, ցույցերը և հրապարակական հանդեսներն արգելում է, պարզելով կազմակերպողների անձնավորությունը և այդ մասին զեկուցում քաղամասի պետին։

51. Թաղային հսկիչը հետևում է, վորպեսզի պետական հիմնարկությունների և ձեռնարկությունների շենքերում տեղի չունենան կրոնական ծիսակատարություններ և չցուցադրվեն դավանանքի վերաբերող առարկաներ (պատկերներ, կրոնական բնույթ ունեցող անդրիներ և այլն)։

52. Թաղային հսկիչը թույլ չի տալիս արգելելու կրոնական ծեսերի կատարումները, յեթե այդպիսիք չեն խանգարում հասարակական կարգը և չեն վոտնահարում քաղաքացիների իրավունքները։

53. Թաղային հսկիչն արգելում է փողոցներում և հանրային ոգտագործման վայրերում հանդես գալ թափառաշրջիկ յերգիչներին, յերաժշտներին, կրկեսային դերասաններին և այլ անձանց, վորոնք ոգտագործում են զեղարվեստը, առանց այդ մասին համապատասխան թույլտվություն ունենալու։

54. Թաղային հսկիչը հետևում է, որպեսզի հրապարակական հանդեսները, զվարճությունները և ակումբները փակվեն պարտադիր որոշումներով սահմանված ժամանակին։

ԳԼՈՒԽ V

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԱԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

55. Թաղային հսկիչը հետևում է, որպեսզի քաղաքացիների ցուցակագրումը տեղի ունենա համաձայն Ներքգործժողկոմատի սահմանած ձևի անձնական վկայականների։ Կարմիր բանակի և նավատորմի զինվորական ծառայողների համար որպես անձնական վկայական ծառայում են կարմիր բանակայինների ծառայական գրքույկները կամ հրամանատարական, քաղաքացիական և վարչական կազմին պատկանելու վկայականները, իսկ առևտրական նավատորմի ծառայողների համար՝ հատուկ ձևի ծովային ծառայության վկայականները։

56. Թաղային հսկիչը հետևում է, որպեսզի տնային վարչությունները քաղաքում և քաղաքատիպ վայրում բնակություն հաստատելու համար յեկածների և բնակարան փոխողներ

ների ցուցակագրման համար պահեն հատուկ ձևի տնային գրքույկներ։

57. Թաղային հսկիչն հետևում է, որպեսզի տնային վարչությունները՝

ա) իր ժամանակին տնային գրքերի մեջ մուծեն յեկող, գնացող և բնակարան փոխող քաղաքացիներին,

բ) իր ժամանակին ներկայացնեն տնային գրքույկները համապատասխան ցուցակագրությամբ և փաստաթղթերով միլիցիային համապատասխան դիտողությունների համար,

գ) թույլ չտան տներում ապրելու միլիցիայում չգրանցված քաղաքացիներին։

58. Հոդված 56-57-ում մատնանշված տնային վարչությունների պարտականությունների կատարմանն հետևելու նպատակով, թաղային հսկիչը կանոնավորապես ստուգում է տնային գրքերը և տներում ապրող քաղաքացիներին, համաձայն տնային գրքերի։

ԳԼՈՒԽ VI.

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

59. Թաղային հսկիչը պահանջում է, որ տնատերերը ժամանակին կատարեն որենքով և

պարտադիր վորոշումներով իրենց վրա դրված պարտականությունները՝ բարեկարգություն, մաքրություն և կարգ պահպանելու տների ներսում, ինչպես և իրենց տների տարածությամբ ընկած մայթերում և փողոցի մասում (մաքրել տանիքները, ձյունը, կեղտը)։

60. Հանրային վայրերում բարեկարգություն և մաքրություն պահպանելու պարտականությունների կատարման ժամանակ Թաղային հսկիչն ոգտվում է դռնապանների ոգնությամբ, համաձայն գոյություն ունեցող որենքների և պարտադիր վորոշումների։

61. Թաղային հսկիչն հետևում է, վորպեսզի Խորհրդային Իշխանության սահմանած տոների և հանդեսների որերին տնատերերն իրենց տները զարդարեն կարմիր դրոշակներով։

62. Թաղային հսկիչն հետևում է, վորպեսզի տնատերերը—

ա) աչքի ընկնող տեղում կախեն տան համարը,

բ) կատարեն դռները, դարբասները փակելու ժամանակի մասին յեղած պարտադիր վորոշումները,

գ) կատարեն մուտքերի, հրապարակների, վեր տանող աստիճանների և իրենց տների

տարածությամբ ընկած փողոցի մասը լուսավորելու համար յեղած պարտադիր վորոշումները։

53. Թաղային հսկիչը պահանջում է, վորպեսզի տնատերերը—

ա) մաքրեն ձուլնից և սառույցից քաղաքային ջրմուղի հրդեհաշեջ հորերի տանիքները, յեթե այդպիսիք կան,

բ) ձեռք առնել սահմանված հակահրդեհային միջոցները,

գ) իր ժամանակին աղբն ու անմաքրությունները դուրս տանեն նրանց համար նշանակված հատուկ տեղերը։

64. Թաղային հսկիչն հետևում է, վորպեսզի տնատերերն ամրացնեն կամ հեռացնեն ընկնող ցուցանակները և ընդհանրապես անհրաժեշտ միջոցներ ձեռք առնեն կանխելու դժբախտ դեպքերն իրենց տան և իրենց տան տարածությամբ ընկած փողոցի շրջանում, յերթևեկության համար վտանգավոր հանդիսացող վայրը շրջափակելով կամ այլ նախազգուշական միջոցներ ձեռք առնելով։

65 Թաղային հսկիչն հետևում է, վորպեսզի՝

ա) խմելու համար գործադրող ջուրը և ջրի ավազանները չը կեղտոտվեն,

բ) փողոցներից և հանրային վայրերից անմիջապես հեռացվեն սատկած կենդանիների դիակները և առարկաները. վորոնք վարակում են ոդը։

66. Թաղային հսկիչն հետևում է, վորպեսզի չփչացնեն՝

ա) շենքերը, հեռագրի և հեռախոսի լարերը և ընդհանրապես փողոցներում և հանրային վայրերում գտնվող պետական, հասարակական և մասնավոր ամեն տեսակ կայքը,

բ) պատմական, գեղարվեստական հուշարձանները, հնությունները և բնական գեղեցկությունները,

գ) փողոցներում, հրապարակներում, գրոսավայրերում, այգիներում, պուրակներում յեղած ծառերը և բուսականությունը։

67. Թաղային հսկիչն հետևում է, վորպեսզի դանապանները՝

ա) մաքրեն մայթերի կեղտը, փոշին, սառույցը և ձյունը, համաձայն յեղած վորոշումների,

բ) հետևեն տների սանիտարական դրության, մաքրեն բակերը և հետևեն աղբի արկղները ժամանակին դատարկելուն,

գ) մութն ընկնելուն պես լուսավորեն տները առջևի համարային լապտերները և ներքին աստիճաններն ու միջանցքները,

դ) իրենց շրջանի սահմաններում ոգնեն Միլիցային հսկելու կարգի, խաղաղության և հասարակական ապահովության պահպանման, նկատած ամեն մի խախտման և դժբախտ պատահարների դեպքում հայտնեն պահակային միլիցիոներին կամ քաղաքաժասին, անհրաժեշտ դեպքում վորյեվե մեկին ուղարկելով քաղմաս, ընդունեն իրենց հանձնվող անձերին և նրան անձամբ տեղ հասցնեն, ըստ միլիցիայի ցուցմունքի,

յե) կրեն հերթական (գիշերային) հերթապահություն,

զ) գիտենան տեղական հրդեհաշեջ մասերի տեղերը, նրանց հեռախոսների ինչպես և քաղմասի հեռախոսի համարները յեվ մոտակայքում յեղած հեռախոսային ապպարատների տեղերը, վորոնցով կարելի յե կարեվոր դեպքերում լուր տալ հրդեհաշեջ խմբին կամ քաղմաս,

ե) հերթապահության ժամանակ հերթապահության հետ կապ չունեցող գործերով չզբաղվեն։

68. Թաղային հսկիչն հետևում է փողոցների շարժումը կանոնավորող կանոնների

պահպանման, հաժառայն Միլիցայի ծառայութեան կանոնադրութեան։

ԳԼՈՒԽ VII

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

69. Հրդեհի դեպքում թաղային հսկիչը պարտավոր է՝

ա) անմիջապես գնալ հրդեհի վայրը և հրդեհի չափի մասին տեղեկացնել քաղմասի պետին,

բ) միլիցոներներով շրջափակել այրվող շենքը և բոլոր մուտքերի, դարբասների մոտ պահակներ կանգնեցնել, արգելելով կողմնակի մարդկանց մուտքը,

գ) միջոցներ ձեռք առնել, վորպեսզի հրդեհաշեջ խումբը կարողանա ազատ յերթ և գործունեություն ունենա։

70. Թաղային հսկիչը—

ա) ղեկավարում է հրդեհը հանգցնելու աշխատանքը, մինչև քաղմասի պետի կամ հրդեհաշեջ խմբի գալը,

բ) ձեռք է առնում ամեն անհրաժեշտ և հնարավոր միջոցներ այրվող տներում մնացած մարդկանց փրկելու և ապահով տեղ փոխադրելու հեշտ բռնկվող և պայթուցիկ նյութերը,

գ) միջոցներ է ձեռք առնում հրդեհի վայրը չթողնելու կողմնակի անձանց և հարևան տների բնակիչներին լուր տալու իրենց ըստ պատանացող վտանգի մասին, յեթե այրվող տան մեջ կան բռնկվող նյութեր,

դ) կանխում է հնարավոր խուճապը և իրեր դուրս նետելն այն բնակարաններից, վորոնց վտանգ չի սպառնում,

յե) ուժանդակում է քաղաքացիների գույքը փրկելուն։

71. Թաղային հսկիչն հետևում է, վորպեսզի հրդեհի ժամանակ դուրս հանվող իրերը դարսվեն Միլիցիայի ժամանակավոր և հսկողության տակ առած տեղերում։ Հրդեհը վերջանալուց հետո թաղային հսկիչն արգելում է կողմնակի մարդկանց հրդեհի վայրում մնացած իրերին ձեռք տալ և պահանջում է տնատիրոջից անմիջապես մաքրել փողոցն ու շենքի բակը։

72. Թաղային հսկիչն անհրաժեշտ միջոցներ է ձեռք առնում հրդեհի ժամանակ վնասված անձանց առաջին ոգնություն հասցնելու, կարեվոր դեպքերում հրդեհիվ այրբժիշկ հրավիրելով։

73։ Քաղաքացիներին և նրանց կայքին սպառնացող հեղեղումների, յերկրաշարժների ժամանակ թաղային հսկիչը միջոցներ ե ձեռք առնում այդ մասին լուր տալու թաղի բնակիչներին և փրկության համար անհրաժեշտ հնարավորություններ ե նախապատրաստում, իսկ հեղեղման ժամանակ՝ միջոցներ ե ձեռք առնում ազատելու խեղդվողներին, քաղաքացիների կայքը և առաջին ոգնություն ցույց տալու վնասվածներին։

ԳԼՈՒԽ VIII.

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԵՎՏՐԻ ՅԵՎ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՀՍԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

74. Թաղային հսկիչն հետեվում ե, վորպեսզի թաղի սահմաններում առեվտրով և արհեստներով զբաղվող անձինք ունենան համապատասխան թույլատվություն կամ արտոնագիր (պատենտ), յեթե գործող որենքներով այդպիսիք պահանջվում ե և վորպեսզի առեվտուրը կատարվի համաձայն որենքի և պարտադիր վորոշումների կանոնների։

75. Թաղային հսկիչն հետեվում ե, վորպեսզի առեվտուր չը կատարվի այն որերին և ժամերին, յերբ արգելվում ե խանութները բացելը և առաջադրում ե փակել առեվտրական և արդյունաբերական ձեռնարկություններն ու դադարեցնել ձեռքի վրայի առևտուրը, այլ և հսկում ե, վորպեսզի առևտրական ձեռնարկությունները ճշտորեն պահպանեն ճաշվա ընդհատումը։

76. Թաղային հսկիչն հետևում ե, վորպեսզի չվաճառվեն ժամանավոր գործածությունից հանված, մաքսը չվճարված ապրանքներ, այլ և այնպիսի ապրանքներ, վորոնք ձեռք են բերված հանցագործության կամ անթույլատրելի արհեստների միջոցով։

77. Առևտրի նյութ չեն կարող լինին՝

ա) վոսկու և արծաթի վայրուտան,

բ) սահմանած աստիճանից բարձր վոգելից խմիչքները,

գ) մաքսի յենթակա, բայց մաքսը չվճարած ապրանքներ,

դ) թմրեցնող նյութեր՝ կոկային, ոպյում, մորֆի և այլն։

78. Թաղային հսկիչն հետևում ե, վորպեսզի շուկաներում և հանրային այլ վայրերում առևտուր անելու կամ արհեստներով զբաղվելու թույլատվություն ունեցող անձինք՝

ա) իրենց հատկացրած վայրերից ավելի տեղ չգրավեն,

բ) չը խանգարեն ազատ և ապահով յերթևեկը,

գ) չխանգարեն հանրային կարգը կանչելով, համառ առաջարկություններով և այլն։

79. Թաղային հսկիչն արգելում է առևտրի մեջ գործադրել փչացած, սահմանված կարգով չստուգված, ինչպես և համաձայն գործող որենքների, գործածությունից հանված չափ ու կշիռ։

80. Թաղային հսկիչն հետևում է, վորպեսզի ուտեստեղեն վաճառելու դեպքում շուկաներում և առևտրական շենքերում խիստ կերպով պահպանվեն որենքով և պարտադիր վորոշումներով սահմանված սանիտարական կանոնները։

Ուտեստեղենի մթերքները պիտի վաճառվեն միանգամայն առանձին այնպիսի առարկաներից, վորպիսիք կարող են նրանց կեղտոտել, ինչպես որինակ՝ հնոտիներ, հագուստեղեն և այլն։ Թաբաղները, զամբյուղները և այն ամենը, ինչի մեջ վոր դրված են ուտեստեղենի ապրանքները, պիտի ծածկված լինեն և փոշուց ու ճանճերից պահպանված։

Ուտեստեղենի մթերքների վաճառքն արգելվում է անմիջապես արտաքնոցների, կեղտա-

փոսերի և կառապանների կանգնման վայրերի մոտ։

81. Քաղաքի շուկային հետևելու պարտականությունների կատարման ժամանակ թաղային հսկիչը կարող է դիմել շուկայի կոմիտեյի աջակցության և իրավասու յե պահանջել նրանցից, վոր նրանք ճշտորեն կատարեն իրենց վրա դրված պարտականությունները, շուկան բարեկարգ պահելու, սանիտարական պահանջները կատարելու նկատմամբ և այլն։

82. Թաղային հսկիչը թույլ է տալիս գինու և գարեջրի առևտուր միայն այն հիմնարկներում և ձեռնարկներում, վորոնք ունեն համապատասխան թույլտվություն և արտոնագիր և հետևում է, վորպեսզի առևտուրը կատարվի համաձայն թույլտվության և արտոնագրի, վորպեսզի այդ վայրերում անկարգություններ և անպարկեշտություններ չլինեն և փոքրահասակներին ու հարբածներին գինի և գարեջուր չտրվի։

83. Թաղային հսկիչը հետևում է, վորպեսզի իր թաղամասում յեղած գինետները, քարվանսարաները, խաները, հյուրանոցները և կահավոր սենյակները բացվեն և պահվեն այդ մասին յեղած որենքների և պարտադիր վորոշումների կանոնների համաձայն։

84. Թաղային հսկիչն հետևում է, վորպեսզի

ա) իրենց հատկացրած վայրերից ավելի տեղ չգրավեն,

բ) չը խանգարեն ազատ և ապահով յերթևեկը,

գ) չխանգարեն հանրային կարգը կանչելով, հատուկ առաջարկություններով և այլն։

79. Թաղային հսկիչն արգելում է առևտրի մեջ գործադրել փչացած, սահմանված կարգով չատուգված, ինչպես և համաձայն գործող որենքների, գործածությունից հանված չափ ու կշիռ։

80. Թաղային հսկիչն հետևում է, վորպեսզի ուտեստեղեն վաճառելու դեպքում շուկաներում և առևտրական շենքերում խիստ կերպով պահպանվեն որենքով և պարտադիր վորոշումներով սահմանված սանիտարական կանոնները։

Ուտեստեղենի մթերքները պիտի վաճառվեն միանգամայն առանձին այնպիսի առարկաներից, վորպիսիք կարող են նրանց կեղտոտել, ինչպես որինակ՝ հնոտիներ, հագուստեղեն և այլն։ Թաբաղները, զամբյուղները և այն ամենը, ինչի մեջ վոր դրված են ուտեստեղենի ապրանքները, պիտի ծածկված լինեն և փոշուց ու ճանճերից պահպանված։

Ուտեստեղենի մթերքների վաճառքն արգելվում է անմիջապես արտաքնոցների, կեղտաֆոսերի և կառապանների կանգնման վայրերի մոտ։

81. Քաղաքի շուկային հետևելու պարտականությունների կատարման ժամանակ թաղային հսկիչը կարող է դիմել շուկայի կոմիտեյի աջակցության և իրավասու յե պահանջել նրանցից, վոր նրանք ճշտորեն կատարեն իրենց վրա դրված պարտականությունները, շուկան բարեկարգ պահելու, սանիտարական պահանջները կատարելու նկատմամբ և այլն։

82. Թաղային հսկիչը թույլ է տալիս գինու և գարեջրի առևտուր միայն այն հիմնարկներում և ձեռնարկներում, վորոնք ունեն համապատասխան թույլտվություն և արտոնագիր և հետևում է, վորպեսզի առևտուրը կատարվի համաձայն թույլտվության և արտոնագրի, վորպեսզի այդ վայրերում անկարգություններ և անպարկեշտություններ չլինեն և փոքրահասակներին ու հարբածներին գինի և գարեջուր չտրվի։

83. Թաղային հսկիչը հետևում է, վորպեսզի իր թաղամասում յեղած գինետները, քարվանսարաները, խանները, հյուրանոցները և կահավոր սենյակները բացվեն և պահվեն այդ մասին յեղած որենքների և պարտադիր վորոշումների կանոնների համաձայն։

84. Թաղային հսկիչն հետևում է, վորպեսզի

ռայլապանություն, բեռնակրություն անող անձինք ունենան այդ մասին համապատասխան թույլտվություն։

ԳԼՈՒԽ IX.

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՐԱԶԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՍՐԻԿՈՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՅԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

85. Թաղային հսկիչը թույլ չի տալիս կախարդներին, գուշակներին, և այլն, վորպեսզի, ոգտվելով ուրիշների տգիտությունից և սնահավատությունից, իրենց շահի համար կախարդությամբ և գուշակությամբ պարապեն, վորպես արհեստ։

86. Թաղային հսկիչն արգելում է աշխատունակ քաղաքացիներին, վորոնք խուսափում են աշխատանք վերցնելուց, պարապել մուրացկանությամբ, վորպես արհեստ և հսկում է, վորպեսզի մուրացկանությամբ պարապողները խաբեբայական միջոցների չդիմեն, նպատակ ունենալով ուրիշների հավատը շահագործել։

87. Թաղային հսկիչը միջոցներ է ձեռք առնում հայտնաբերելու անբարոյականության

վորջերը և պոռնկությանն ուժանդակողներին ու միջնորդներին, ձերբակալելով նշանց։

88. Թաղային հսկիչն արգելում է ամեն տեսակ թղթախաղ և այլ դրամով խաղեր հանրային վայրերում և միջոցներ է ձեռք առնում հայտնաբերելու խաղավորջերը, վորոնց տերերը զբաղվում են այդպիսի խաղեր կազմակերպելով կամ խաղացողներին բնակարան հատկացնելով։

89. Թաղային հսկիչը թույլ չի տալիս մասնավոր մարդկանց և կազմակերպություններին վիճակահանություններ կազմակերպել, առանց այդ մասին յեղած համապատասխան թույլտվության։

90. Թաղային հսկիչը հետևում է, վորպեսզի հանրային վայրերում վոչ վոք հասարակական ժողովարարություններ չկազմակերպի, առանց համապատասխան թույլտվության։

91. Թաղային հսկիչը խստորեն հետևում է՝

ա) վորպեսզի վոչ վոք և վոչ մի տեղ չը-պատրաստվեն, թեկուզ և չվաճառելու նպատակով, վոգելից խմիչքներ կամ սպիրտ պարունակող նյութեր, առանց համապատասխան թույլտվության կամ սահմանած աստիճանի,

բ) վորպեսզի «ա» կետում հիշատակած վոգելից խմիչքները, վոր պատրաստվում են

առանց հաՀապատասխան թույլտվության, վոչ մի տեղ չվաճառվեն և չպահվեն։

92. Առանց թույլտվության վոգելից խմիչք, սպիրտ պարունակող նյութեր պատրաստելու և վաճառելու հայտնաբերության դեպքում, թաղային հսկիչը—

ա) ձերբակալում է այդպիսի գործողության մեջ բռնված անձանց, և

բ) առգրավում է վոգելից խմիչքը և սպիրտ պարունակող նյութերը, նույնպես և պատրաստելու գործիքները և այն ամանները, վորոնց մեջ պահվում են այդ նյութերը։

93. Թաղային հսկիչն հետևում է, վորպեսզի հասարակական վայրերում վոչ վոք չլերեվա այնպիսի հարբած դրությամբ, վոր վատնգ է ստեղծում ինքն իրեն, շրջապատողներին կամ հասարակական կարգին։ Նման դեպքերում թաղային հսկիչը միջոցներ է ձեռք առնում հարբածին հեռացնելու կամ ձերբակալում է, մինչև նրա սթափվելը և արձանագրություն է կազմում։

94. Թաղային հսկիչը—

ա) արգելում է ամեն տեսակի սրիկայություն,

բ) թույլ չի տալիս հասարակական վայրերում անկարգություններ անել, ծեծել միմի

անց և անամոթության կոպիտ արտահայտություններ, ինչպես որինակ, հայհոյանք և այլն,

գ) արգելում է կենդանիների հետ անգութ վարվելը։

ԳԼՈՒԽ X.

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՇԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

95 Թաղային հսկիչն ոժանդակում է յուրաքանչյուր պետական հիմնարկության և պաշտոնատար անձի, համաձայն գոյություն ունեցող որենքների և տեղական իշխանության պարտադիր վորոշումների։

96. Թաղային հսկիչը գործադրության է դնում վարչական որգանների վարչական կարգով արված և ուժի մեջ մտած տուգանման վորոշումները։

97. Թաղային հսկիչը, համաձայն հատուկ որդերների, նախնական կալանքի յե յենթարկում մասնավոր մարդկանց կամ ընկերությունների մոտ հայտնաբերված այն գույքը, վոր թագցրած է բռնագրավումից և գործող որենքների հիման վրա, յենթակա յե բռնագրավման, կազմելով ուռելի մանրամասն ցուցակը յեվ գույքը ցու-

ցակի պատճենի հետ հանձնելով տիրոջը կամ վստահություն վայելող մի ուրիշ անձի ի պահ։

98. Թաղային հսկիչը խուզարկություններ և հանույթներ անում է համաձայն հատուկ որդերների, տրված այդ մասին լիազորված անձերի կողմից։

Առանց այս հոդվածում մատնանշած որդերի, թաղային հսկիչը խուզարկություններ և հանույթներ անում է միայն այն դեպքերում, երբ ունի բավարար հիմք յենթադրելու, որ խախտման հետքերը կամ իրային ապացույցները կարող են թաքցրվել կամ վոչնչացվել։

99. Թաղային հսկիչը կարող է քաղաքացիներին վտարել իրենց գրաված բնակարաններից, այլ և տեղավորել նրանց բնակարաններում միայն համաձայն դատական վորոշումների կամ որդերների, տրված որենքով այդ մասին լիազորված հիմնարկությունների կամ անձաց կողմից։

100. Թաղային հսկիչը—

ա) հանձնում է կոչնագիր այն անձանց, վորոնք կանչվում են նախաքննության, հետաքննության կամ դատարան,

բ) ներկայանալուց խուսափող անձանց տանում է նախաքննության, հետաքննության

և դատարան, համաձայն հետաքննության որգանների, քննիչի և դատարանի վորոշման,

գ) հետևում է, վոր մեղադրյալները, վորոնցից նախաքննության որգանների կամ քննիչի կողմից ստորագրություն է առնված, չմեկնեն, չհեռանան իրենց ընտրած կամ իրենց հատկացրած բնակավայրերից, առանց հետաքննության որգանների, քննիչի կամ դատարանի թույլտվության,

դ) հետաքննության որգանների կամ քննիչի պահանջով պահակներ է տալիս շրջափակելու խուզարկության յենթակա վայրերը,

ե) նախաքննության որգանների կամ քննիչի պահանջով հսկողություն է սահմանում կամ պահակ կանգնեցնում պահպանելու այն իրային ապացույցները, վորոնք իրենց գրաված վայրից տանել հնարավոր չէ,

զ) գործադրում է հետաքննության որգանների, քննիչի կամ դատարանի վորոշումները հսկողության տակ առնելու մեղադրյալներին կամ հանցագործության մնջ կասկածվողներին, վորոնց, նախաքննությունից, հետաքննությունից կամ դատարանից չխուսափելու համար, վորոշված է հսկողության տակ առնել։

101. Թաղային հսկիչը դատական վորոշումները կատարելու կարգով, գանձում է դատապարտվածների կայքից տուգանքը և դատական ծախքերը, նույնպես և բռնագրավում է նրանց կայքը։

102. Թաղային հսկիչը հարկային տեսուչների և ֆինանսական գործակալների հրավերով ներկա յե լինում՝

ա) շուկաներում, հրապարակներում, խանութներում և վաճառատներում առանց արտոնագրի կատարվող առևտրի մասին կազմվող արձանագրություններին,

բ) ներկա յե լինում հարկը չվճարողների կայքի ցուցակագրման, աճուրդով վաճառելու համար,

գ) ոժանդակում է ֆինանսական հսկողության որգաններին անձնապես գանձելով ինչպես պետական, նույնպես և տեղական ամեն տեսակ հարկերի ու գանձումների ապառիկները, համաձայն Քրեական Դատ. Որենսգրքի 455 և 459 հոդվածների։

103. Թաղային հսկիչը, յերբ վորևե աջակցություն ստանալու համար նրան են դիմում Արտակարգ Հանձնաժողովի կամ Քրեական հետախուզության որգանները, պարտավոր է, նրանց կոչումը պարզելուց հետո, կատարել նրանց որինական պահանջները։

104. Թաղային հսկիչն ոժանդակում է սանիտարական տեսչությանը ոդի, ջրի, հողի, ջնակարանների, ուտելեղենների սանիտարական պահպանման վերաբերյալ որենքով իր վրա դրված պարտականությունները կատարելու, դույնպես և համաճարակների դեմ ձեռք առնվող միջոցների ժամանակ։

105. Թաղային հսկիչն ոժանդակություն է ցուցց տալիս անասնաբուժական մարմնին կենդանիների վերաբերյալ սանիտարական ամեն տեսակ պարտականություններ կատարելիս։

106. Թաղային հսկիչն ոժանդակում է մանկական սոցիալական տեսուչներին (սոցիալական ոգնության յեղբայրներին և քույրերին) իրենց վրա դրված պարտականությունների կատարման մեջ՝ մանկական անխնամության, մուրացականության, պոռնկության, որինազանցության և մանուկներին շահագործելու և նրանց հետ վատ վարվելու դեմ պայքարելիս։

107. Թաղային հսկիչն ոժանդակում է զինվորական իշխանություններին զորակոչերի ժամանակ և զորակոչը անցկացնելու մեջ։

Հաս. Կարգի Պաշտ. Բաժնի Վարիչ՝
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Միլիցիայի Տեսուչ՝ Խ. ԻԳԻԹԽԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ № 1.

ՀՐԱՀԱՆԳ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. Միլիցիայի որգանների կազմած յուրաքանչյուր արձանագրություն հանցագործությունների, պարտադանցության յեվ հասարակական կյանքի սահմանված կարգի ամեն մի խախտման մասին, պետք է պարունակե հետեվյալ ցուցմունքները.—

ա) տարի, ամիս, ամսաթիվ, արձանագրություն կազմելու տեղը, արձանագրություն կազմողի պաշտոնը յեվ ազգանունը, նայեվ արձանագրություն կազմելու հիմունքը (տուժածի բողոքը, կողմնակի անձի հայտարարությունը, հանձնվելու համար ներկայանալը, իշխանավոր անձի գրավոր յեվ բանավոր հրամանը յեվ այլն)։

բ) հանցագործության կատարման ժամանակը յեվ տեղը, ինչ հանցանք լինելը, ով է կասկածվում կամ մեղադրվում (անուն, հայրանուն յեվ ազգանուն կամ մականուն յեվ բնակավայրը յուրաքանչյուր վկայի) յեվ այն հանգամանքները, որոնք կարող են հաստատել վկաներից ամեն մեկը։

2. Արձանագրությունը կազմվում է ըստ հնարավորի դեպքի վայրում, հանցանքն հայտնաբերելիս կամ այդ մասին հայտարարություն ստանալուց անմիջապես հետո։

3. Տուժածի բողոքի կամ կողմնակի անձի ցուցմունքի հիման վրա կազմած արձանագրության մեջ պիտի հիշատակվեն նրանց անունը, հայրանունը, ազգանունը յեվ բնակավայրը ու մանրամասնորեն գրված լինի թե ում վրա յեն կասկածում յեվ ինչ ապացույցներով կարող են այն հաստատել, անպայման մատնանշելով, որ իշյալ անձանց նախազգուշացրած է կեղծ մատնությունների համար պատասխանատվության յենթարկվելու մասին, յեթե ակնհայտնի կերպով որյեվե մեկին մեղադրում են հանցագործության մեջ (հոդ. 177 յեվ 179. Քրեական Դատ. Որենսգրքի)։

4. Արձանագրությունները պիտի գրված լինեն ընթեռնելի. ամեն մի ուղղում, ջնջում,

քերվածք պիտի մատնանշվի արձանագրության մեջ, ստորագրությունից առաջ (հոդ. 82 Քր. Դատ. Որենսգ.)։

5. Արձանագրությունները գրվում են հայերեն լեզվով, կամ տվյալ վայրի բնակչության մեծամասնության լեզվով (հոդ. 22 Քր. Դատ. Որենսգ.)։

6. Հարցաքննվող անձանց ցուցմունքները մուծվում են արձանագրությունների մեջ ըստ հնարավորի նրանց սեփական խոսքերով, առանց փոփոխությունների, բաց թողումների յեվ հավելումների (հոդ. 141, 168 Քր. Դատ. Որ.)։

7. Տուժածի, հայտարարություն տվողի, վկայի յեվ կասկածվողի՝ յեթե այդպիսին կա, հարցաքննությունների արձանագրությունների մեջ, ամեն մեկի տված ցուցմունքից հետո պետք է նշանակվի, վոր հարցաքննվողն այլյեվս ասելիք չունի, վոր իր տված ցուցմունքն իրեն կարդացված է յեվ գրված է իր բառերով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ — ա) Կասկածվողի հարցաքննության արձանագրությունների մեջ, բացի դրանից պիտի նշանակված լինի, արդյոք կասկածվողն իրեն մեղավոր ճանաչում է թե վոչ։

բ) Համբ, խուլ կամ արձանագրություն կազմողին անհասկանալի լեզվով խոսող անձերի հարցաքննությունների ժամանակ հրավիրվում է թարգման կամ այնպիսի անձ, վորը հասկանում է համբի յեվ խուլի խոսակցության նշանները։ Թարգմանների մասնակցության մասին հիշատակվում է արձանագրությունների մեջ, վորոնք յեվ պետք է ստորագրեն (հոդ. 143 յեվ 170 Քր. Դատ. Որ.)։

գ) Տուժածին, վկաներին յեվ կասկածվողներին պետք է թույլ տալ անձամբ գրելու իրենց ցուցմունքները, յեթե այդ մասին նրանք կխնդրեն (հոդվ. 142 և 171 Քր. Դատ. Որ.)։

դ) Անպայմանորեն արգելվում է բռնանալ մեղադրվողի կամ այլ հարցաքննվողների ցուցմունքների յեվ գիտակցության վրա յեվ կամ այլ միջոցներով ազդել նրանց վրա արձանագրություններ կազմելիս (հոդ. 139 Քր. Դատ. Որենսգրքի)։

8. Յուրաքանչյուր ցուցմունք պիտի ստորագրված լինի ցուցմունք տվողի կողմից։ Անգրագիտության դեպքում նրա փոխարեն ստորագրում է նա, ում վոր նա վստահում է յեվ այդ մասին բերանացի խնդրում։

9. Եթե վորյեվե մեկը հրաժարվում է ստորագրել իր տված ցուցմունքն, ապա այդ մասին հիշատակվում է արձանագրության մեջ։

10. Յուրաքանչյուր արձանագրության վերջում պիտի լինի արձանագրությունը կազմողի ստորագրությունը։

11. Իրային ապացույցները՝ զենքը, վորով կատարվել և հանցագործությունը, կեղծ փաստաթղթերը, կեղծ դրամանիշները, թույնի մնացորդը, արնոտած կամ վնասված առարկաները յեվ ընդհանրապես այն ամենը, ինչ վոր գտնըված է գննման ու հանույթների ժամանակ, վորոնք կարող են պարզաբանել հանցագործությունը կամ հանցագործի անձնավորությունը, նույն թվում յեվ գողացած կայքը, պետք է ժանրամասնորեն ցուցակագրվի արձանագրության մեջ, ճշտորեն մատնանշելով, թե վորտեղ յեվ ինչ հանգամանքներում են դրանք գտնվել յեվ ինչու այս կամ այն առարկաները կցված են արձանագրությանը, վորպես իրային ապացույցներ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ —ա) Խուզարկությունների մասին կազմած արձանագրություններին պիտի կցված լինի իրային ապացույցների ժանրամասն ցուցակը, կազ-

մված խուզարկության վայրում (հոդ. 186 Քր. Դատ. Որենսգ.)։

բ) Խուզարկությունների և հանույթների մասին ամեն տեսակ հայտարարություն և պահանջ պետք է մուծվի արձանագրության մեջ (հոդ. 188 Քր. դատ. Որենսգ.)։

գ) Արձանագրության և իրային ապացույցների ցուցակի պատճեն տրվում է այն անձին կամ նրա ընտանիքին, վորի մոտ կատարվել է խուզարկությունը (հոդ. 188 Քր. Դատ. Որ.)։

դ) Պետական համապատասխան հիմնարկներին հանձնված շուտ փչացող իրային ապացույցների ցուցակը պիտի կցված լինի արձանագրությանը։

12 Եթե կատարվել է գույքային հանցագործություն, որինակ, գողություն, ապա արձանագրության մեջ պիտի ցույց տրվի գողացված իրերը և յուրաքանչյուրի արժեքն առանձին, տուժածի գնահատությամբ։

13. Հրդեհների մասին կազմվող արձանագրությունների մեջ պիտի նշանակվի՝

ա) հրդեհի ժամանակը, բ) տեղը, փողոցը, տան №—ը, գ) ինչպիսի շենքեր են այրվել՝ քարի թե փայտի և տանտիրոջ անունը, ապահովագրված են արդյոք և ինչ գումարի,

դ. վնասների ընդհանուր գումարը, ցույց տալով վնասվածներից յուրաքանչյուրի, ինչպես շենքի, նույնպես և շարժական կայքի վնասի գումարն առանձին, յուր յուր) ինչ պատճառով յուր ում հանցանքով ե հրդեհ առաջացել։

14. Հանկարծամահների և ընդհանրապես մեռած դիակների մասին կազմած արձանագրությունների մեջ ցույց ե տրվում յուրը և ինչ հանգամանքներում ե հայտնաբերված դիակը, ով ե հայտնաբերել և բժշկի քննության յեզրակացության արդյունքը, մահվան պատճառների մասին։

15. Ժողովրդական առողջապահության կանոնների խախտման համար յեղած արձանագրությունները կազմվում են բժշկի ներկայությամբ, վորը և ստորագրում ե այն։

Միլիցիայի Տեսուչ՝
Խ. ԻԳԻԹԽԱՆՅԱՆ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI. 1922
именд. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0221470

39 475

գ. Վնասների ընդհանուր գումարը, որպես սուրբ վնասվածների շուրջանչյուրի, ինչպես շենքի, նուշկաների և շարժական կալքի վնասի գումարն առանձին, լեվ յե) ինչ պատճառով լեվ ուժ հանգանքով և երդեհ առաջացել։

14. Հանկարծատների և ընդհանրապես մեռած գլուխների մասին կազմած արձանագրությունների մեջ, որպես և արվում լինը և ինչ հանգամանքներում և հայտնաբերված գլուխը, ով և հայտնաբերել և բժշկի քննությամբ լեգրագրության արդյունքը, մանվան պատճառների մասին։

15. Ժողովրդական առողջապահության կանոնների խախտման համար նշած արձանագրությունները կազմվում են բժշկի ներկայությամբ, գրը և ստորագրում է նա։

Մինչև Տեսուչ
Ա. ԻԳԻՇԵԱՆՑԱՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
7/II 1922